

ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2023 թվականի
Ապրիլի 10-ին կայացած գիտական Խորհրդի N11 նիստի

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 36 անդամներից 33-ը (ցուցակը կցվում է)

Խորհրդի նախագահ Մ.Ա.Գրիգորյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

1. Մագիստրոսական թեզերի ու ավարտական աշխատանքների թեմաների ընտրության և աշխատանքների կատարման հսկողությունն ամբիոններում:

/զեկ. զեկ. ամբիոնի վարիչներ/

2. Բակալավրի կրթական ծրագրերի վերամշակման ընթացքը Ֆակուլտետում

/զեկ. փոխդեկան Ս.Ս.Քելյան/

3. Ընթացիկ հարցեր

Գիտական խորհրդի օրակարգի ընթացիկ հարցերում առաջարկվեց լսել դեկան Մարատ Գրգորյանի կողմից ներկայացված ծրագրի քննարկումը և կարծիք ներկայացնելու դեկանի թափուր պաշտոնին հայտարարված մրցույթին մասնակցելու վերաբերյալ:

Առաջարկությունն ընդունվեց միաձայն:

Նիստի օրակարգը հաստատելուց հետո

1. ԼՍԵՑԻՆ. Դոց.դոց.Ս.Ռ. Սուվարյանի, Վ.Վ.Գրիգորյանի, Մ.Ս.Մկրտչյանի Ա.Թ.Գրիգորյանի, Շ.Վ.Խաչատրյանի հաղորդումը **ամբիոններում մագիստրոսական թեզերի ու ավարտական աշխատանքների թեմաների ընտրության և աշխատանքների կատարման ընթացքի** վերաբերյալ: Ամբիոնի վարիչները ողջունեցին դրված հարցի քննարկումը և նշեցին, որ այն պետք է պահել ուշադրության կենտրոնում: Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը պետք է վերահսկվի,

ուշադրություն հրավիրվի ոչ միայն վերնագրերի կրկնությանը, այլև բովանդակությանը, քանի որ ուսումնասիրման առարկայի, օբյեկտի, նպատակի ու դրված խնդիրների փոփոխությունը կձևավորի բովանդակային տարբեր աշխատանք: Մ.Ս.Մկրտչյանը նշեց, որ ընթացիկ տարում արձանագրվել է իրար հաջորդող տարիների ավարտական աշխատանքների վերնագրերի բառացի կրկնություն, սակայն բովանդակային առումով դեռ ոչինչ չսավեց՝ աշխատանքի պատրաստ չլինելու պատճառով: Դոց.Շ.Վ.Խաչատրյանը նշեց, որ բազմիցս բարձրացրել է ավարտական աշխատանքների կատարման մակարդակի հարցը, սակայն առանձնացրեց նաև փայլուն աշխատանքների առկայությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ.Ս.Հ.Հայրոյանը խոսեց արվարտական աշխատանքների արտագրության մասին, նշեց, որ լավ օրից չի որ դեկավարը թույլ ուսանողին ստիպված տրամադրում է նախկինում օգտագործված նյութեր: Առաջարկեց մինչ աշխատանքների պաշտպանությունը դեկավարները զեկուցման ձևով ներկայացնեն այն: **Պրոֆ.Ս.Հ.Հայրոյանն** առաջարկեց հանձնաժողով կազմել, ստուգել և առկայության պարագայում բարձրաձայնել կրկնություն-արտագրությունների փաստը և պատասխանատվության ենթարկել դեկավարին:

ԵԼՈՒՅԹ ՈՆՆԵՑԱՎ. Դեկան Մ.Ա.Գրիգորյանը պաշտպանեց հանձնաժողով կազմելու, ստուգելու և առկայության պարագայում բարձրաձայնելու կրկնություն-արտագրությունների փաստը ինչպես նաև դեկավարներին: պատասխանատվության ենթարկելու **պրոֆ.Ս.Հ.Հայրոյանի առաջարկը:** դոց.Մ.Ա.Գրիգորյանն անթույլատրելի ու դատապարտելի համարեց նույն աշխատանքը, նույն վերնագրով, նույն բովանդակությամբ, նույն էջերով, նույն եզրակացությամբ, նույն էջերի վրա նույն գծապատկերներով, երկու տարբեր տարիների շրջանավարտներից աշխատանքի կամ թեզի ընդունումը դեկավարի կողմից, դրա ներկայացումը ամբիոն և ատեստավորման հանձնաժողովին: Անընդունելի է, երբ ուսանողի կատարած աշխատանքը միայն տիտղոսաթերթ փոխելն է: Նման քայլով դեկավարը դրդում է ուսանողին, ԲՈՒՀը դեռ չավարտած, զբաղվել

գրագողությամբ, միևնույն ժամանակ ղեկավարը, ոչինչ չանելով, վճարվի ղեկավարման ժամերի համար:

Եղավ առաջարկ՝ էլնելով ընթացիկ նիստի օրակարգի առաջին հարցի քննարկման արդյունքներից, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վերնագրերի, բովանդակային կրկնությունների և արտագրության երևույթների բացահայտման և տարածվածության փաստն արձանագրելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով. 1.պրոֆ.Պ.Ս.Էֆենդյան, 2. դոց.Վ.Մ.Մանուկյան, 3. դոց.Տ.Վ.Սարգսյան:

ՈՐՈՇԵՑԻՆ. Բաց քվեարկության արդյունքներով *ԿՈՂՄՅՈՒՆՈՒՄ՝ 2*, հաստատել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վերնագրերի, բովանդակային կրկնությունների և արտագրության երևույթների բացահայտման և տարածվածության փաստն արձանագրելու համար հանձնաժողով հետևյալ կազմով. 1.պրոֆ.Պ.Ս.Էֆենդյան, 2.դոց.Վ.Մ.Մանուկյան, 3.դոց.Տ.Վ.Սարգսյան

Պրոֆ.Ս.Հ.Հայրոյանի կողմից եղավ ևս մեկ առաջարկություն՝ գրագողության փաստերը բացահայտելու նպատակով կազմել հանձնաժողով:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑՄԱՆ. Դեկան Մ.Ա.Գրիգորյանն անդրադառնալով հնչեցրած առաջարկին նշեց, որ եթե կան նման դեպքեր կարող են դիմել ռեկտորատ՝ հարցը քննելու ըստ ընդունված կարգի:

ՈՐՈՇԵՑԻՆ. Մերժել առաջարկությունը

2. ԼՍԵՑԻՆ. Փոխդեկան Ս.Ս.Քելյանի հաղորդումը **Ֆակուլտետում բակալավրի կրթական ծրագրերի վերամշակման ընթացքի** վերաբերյալ: ԵՊՀ Որակի կենտրոնի կողմից մեկնարկել է բակալավրի կրթական ծրագրերի մոնիթորինգի գործընթացը, որն իրականացվելու է քայլ առ քայլ, ըստ նախապես հաստատված ժամանակացույցի: Ամբիոններում ձևավորվել են աշխատանքային խմբեր, որոնք կկազմեն կրթական ծրագրերը պահանջվող նորմերին համապատասխան՝ պահպանելով ռեկտորատի կողմից ներկայացված ժամկետները:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:

3. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

3.1. ԼՄԵՑԻՆ. Դոց.Մարատ Գրիգորյանը ֆակուլտետի գիտխորհրդին ներկայացրեց անցած տարիների ընթացքում իր կողմից կատարած աշխատանքները, ներկայացրեց գալիք 5 տարիների ընթացքում ղեկավարման իր ծրագրային դրույթները (ծրագրային դրույթները կցված են) և պատասխանեց տրված հարցերին:

ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑ. Փոխդեկան **Ս.Ս.Քելյանը** փորձեց ճշտել թե ի՞նչ սկզբունքով է իրականացվել տարկետման արտոնություններ ստացած մասնագիտությունների ընտրությունը:

ՊԱՏԱՍԽԱՆ. - Նշված հարցը քննարկվել է կառավարության նիստում, մենք նախօրոք տեղյակ չենք եղել:

ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑ. **Պրոֆ.Ս.Հ.Հայրոյանը** փորձեց ճշտել թե 1.ի՞նչ կառուցվածքային փոփոխություններ են իրականացվելու: 2.Ի՞նչ է նշանակում «դասախոսի բարոյական կերպար»: 3. Ինչո՞ւ չեն ստեղծվել գրագողության փաստը բացահայտող հանձնաժողովներ: 4.Ինչո՞ւ ֆակուլտետում գործող գիտական հետազոտության կենտրոնում ներառված չեն եղել ֆակուլտետի կարող ուժերը:

ՊԱՏԱՍԽԱՆ. 1.- Ցավալի է որ երկրաբանության հինգ ամբիոններից մենք այսօր ունենք երկուսը, դա պայմանավորված է ամբիոնների թերձանրաբեռնվածությամբ, այսօր էլ այդ խնդիրը կա: Ես կարծում եմ, որ պետք է կատարվի ամբիոնների միավորում՝ մեծացնելով ամբիոնի ներուժը, հստակեցնելով հաստիքացուցակներ: Իրականացնել լաբորատորիաների միավորում, ձևավորել նորը՝ ելնելով գործող կրթական ծրագրերի պահանջներից: 2. - Դասախոսի բարոյական կերպար ասելով տարբեր մարդիկ տարբեր են հասկացություններ ունեն, ես կարծում եմ, որ դասախոսն իր աշխատանքային գործունեության ընթացքում չպետք է զբաղվի զեղծարարությամբ, կաշառակերությամբ, զրպարտությամբ և իր ամենօրյա գործունեությամբ դաստիարակի երիտասարդ սերունդների: 3. - Գրագողության փաստերը ստուգելու և որոշում կայացնելու խնդիրը ռեկտորատի կողմից ձևավորված էթիկայի հանձնաժողովի գործառույթն է,

որը ժամանակին քննարկել և որոշում էր կայացրել բարձրացրած հարցերի վերաբերյալ: 4.- Ֆակուլտետում նախկինում գործող գիտական հետազոտությունների լաբորատորիայում աշխատել են ֆակուլտետի շրջանավարտները, իրականացրել են գիտական թեզի աշխատաքներ, պաշտպանել են իրենց թեկնածուական թեզերը, գրել գիտական հոդվածներ: Ամեն տարի ֆակուլտետի գիտական խորհրդում քննարկվել են լաբորատորիայի հաշվետվությունները և ուղարկվել Գիտությունների Կոմիտե:

ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑ. Պրոֆ.Ա.Ավագյանը հնարավոր է արդյո՞ք վերականգնել պետական ավարտական քննությունների հանձնման կարգը:

ՊԱՏԱՍԽԱՆ. - Ժամանակին ես անհամաձայնություն եմ հայտնել քննությունների վերացման վերաբերյալ որոշմանը, հիմնավորելով, որ առաջին գիտական աստիճան ստացող շրջանավարտը անպատճառ պետք է հանձնի նեղ մասնագիտական պետական քննություն:

ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑ. Դոց.Շ.Վ.Խաչատրյանն նշեց, որ անցած տարի ամբիոնները միավորելու իր առաջարկը զայրույթ է առաջացրել, 1.ի՞նչն է փոխվել այսօր, որ խոսում եք ամբիոնների միավորման մասին: 2.Ո՞ր լաբորատորիաներն են կահավորված: Ես հայտարարում եմ, որ մեր լաբորատորիան կահավորված չէ, մենք ընդամենն ունենք 6 միկրոսկոպ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ժամանակին մենք կատարել ենք որոշ ամբիոնների միավորում ելնելով ա՛յն ժամանակվա ամբիոնի իրական ծանրաբեռնվածությունից և հինգ ամբիոններից երկուսը պահելու հնարավորություն ունեինք: Այսօր ծանրաբեռնվածությունը անհամեմատ նվազել և միավորման կարիքը այլընտրանք չունի: Բացի այդ նոր կրթական ծրագրերի ներդրումով հնարավոր է նոր ամբիոններ բացել: 2. - Այո՛, մեր լաբորատորիաները կահավորված են անհրաժեշտ ժամանակակից սարքավորումներով: Ամեն տարի պահանջվել է ներկայացնել նոր սարքավորումներ ձեռք բերելու ցանկ, անձամբ դու ինձ ասել ես, որ ունենք բավարար թվով միկրոսկոպներ

և դրա պատճառով քո կողմից ներկայացված ցանկում միկրոսկոպների պահանջ չի եղել:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Պրոֆ.Պ.Ս.Էֆենդյանն առաջարկեց ծրագրում ընդգրկել մարկշեյդերի մագիստրոսական կրթական ծրագրի կազմակերպումը:

ԵԼՈՒՅԹ ՈՆՆԵՑԱՆ.

Ուսանող Ս.Սահակյանը շնորհակալություն հայտնեց դեկան Մ.Ա.Գրիգորյանին գործունեության ընթացքում կատարած մեծ ծավալի ախատանքի համար և ուրախ է որ ֆակուլտետի ծաղկման ականատեսն է:

Սերվիսի ամբիոնի վարիչ դոց.Ս.Ռ.Սուվարյան. - Այսօր բարեփոխումների ժամանակաշրջան է, բարեփոխումներ են ոչ միայն ֆակուլտետում այլև ԵՊՀ-ում: Եվ ֆակուլտետը պետք է ունենա մարտնչող, փորձառու ղեկավար, որպեսզի կարողանանք դիմակայել ժամանակի մարտահրավերներին, դիմակայենք փորձություններին: Հարցադրումների մեջ խոսում ենք մի կողմից տրամաբանության մասին, մյուս կողմից անձնական շահերի մասին, դրանք համատեղելի չեն: Դեկանը պայքարել է յուրաքանչյուրիս համար, ոչ թե նրա համար, որ իրեն օգուտ էր, այլ պայքարել է, որպեսզի ֆակուլտետը զարգանա, լինի առողջ աշխատանքային մթնոլորտ: Անցած տարիների ընթացքում փորձությունների, իրադրությունների ժամանակ շատ դեպքերում դեկանը մեկնել է իր ձեռքը մեզանից յուրաքանչյուրին, և դա չի կարելի մոռանալ և ուրանալ: Այսօր Մ.Ա.Գրիգորյանը կարող ուժ է, աշխատանքի նկատմամբ ունի պատրիտիզմ, համալսարանական ոգի, ֆակուլտետի նկատմամբ սրտացավ վերաբերմունք ապա առաջարկում եմ հավանություն տալ ներկայացված ծրագրին և երաշխավորել նրա թեկնածությունը դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու և ընտրվելու համար:

ՈւԳԸ նախագահ Մ.Տաշյանը անդրադարձավ դեկանի կողմից ներկայացրած ծրագրում առկա կետերից յուրաքանչյուրին: Առանձնացրեց ուսանողներին հուզող մեծ և փոքր խնդիրներին, դեկանի կողմից դրանք լուծելի դարձնելուն: Ուսանողներին ընդառաջելու աջակցությունը համագործակցությունը, դրական են եղել դեկան-ուսանող-դասախոս փոխհարաբերությունը:

Դեկանի հետագա գործունեությունը միայն դրական կանդիդատնա ֆակուլտետի համար:

Ղոց.Վ.Գ.Մարգարյանը նշեց որ բազմաթիվ հարցերով (միջոցառումների կազմակերպում, աշակերտ-ուսանող հանդիպումների կազմակերպում) առիթ է եղել դիմելու դեկանին, որոնք ստացել են իրենց լուծումները: Դրական եմ գնահատում տարիների ընթացքում կատարած աշխատանքը և կցանկանայի որպեսզի դեկան Մ.Գրիգորյանը շարունակի իր գործունեությունը:

Պրոֆ.Պ.Էֆենդյանը պարտավորված համարեց երաշխավորությամբ կողմնորոշել ԵՊՀ գիտխորհուրդի անդամներին Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկանի ընտրության հարցում:

Պրոֆ.Ս.Հ.Հայրոյանը նշեց, որ շատ գոհ է դեկան Մ.Ա.Գրիգորյանի գործունեությունից, ինչպես նաև վատ օրերին ֆակուլտետը փակվելու վտանգից դուրս բերելու հարցում, սակայն ապագան կերտում են երիտասարդները: Խորհուրդ տվեց տեղը զիջել երիտասարդներին:

Ղոց.Ռ.Ս.Սովետյանը նշեց, որ վաղուց գիտեն թե ովքեր են աշխարհագետները:

Եղել է մեկ առաջարկություն՝ հավանություն տալ և հաստատել Մ.Ա.Գրիգորյանի ներկայացրած աշխատանքային ծրագիրը և երաշխավորել նրան դեկանի թափուր պաշտոնում հայտարարված մրցույթին մասնակցելու և ընտրվելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ. Բաց քվեարկության արդյունքներով **ԿՈՂՄ՝ 28, ԴԵՄ՝ 3, ՁԵՌՆՊԱՀ՝ 2,** հաստատել դոց.Մ.Ա.Գրիգորյանի ներկայացրած աշխատանքային ծրագիրը և երաշխավորել դոց.Մ.Ա.Գրիգորյանին թափուր պաշտոնում հայտարարված մրցույթին մասնակցելու և ընտրվելու համար:

Խորհրդի նախագահ

Մ.Ա.Գրիգորյան

Խորհրդի քարտուղար

Ե.Ս.Սանուկյան